նիստեր չեն կայացել և այն քննվել է գրավոր ընթացակարգով, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 150.000 ՀՀ դրամ, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

<<Ֆիրմա Ալֆա>> ՍՊԸ-ի և հայցն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի՝ թիվ <<ԿՄ ՋՄԴՊՐ-ԳՀԱՊՁԲ-2023/41>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 23.11.2023թ. թիվ 2 արձանագրությամբ ա/ձ Նառա Ասատրյանի մասով կայացված որոշումը և 24.11.2023թ. թիվ 3 արձանագրությամբ՝ ա/ձ Նառա Ասատրյանին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու վերբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել ՀՀ Կոտայքի մարզի <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի թիվ <<ԿՄ ՋՄԴՊՐ-ԳՀԱՊՁԲ-2023/41>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 23.11.2023թ. թիվ 2 արձանագրությամբ ա/ձ Նառա Ասատրյանի մասով կայացված որոշումը և 24.11.2023թ. թիվ 3 արձանագրությամբ՝ ա/ձ Նառա Ասատրյանին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ Կոտայքի մարզի <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ից հօգուտ <<Ֆիրմա Ալֆա>> ՍՊԸ-ի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ, որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ Կոտայքի մարզի <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ից հօգուտ <<Ֆիրմա Ալֆա>> ՍՊԸ-ի բռնագանձել 150.000 ՀՀ դրամ, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ